ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

կրթության որակի ապահովման բաժին պետ Նարինե Վարդանյանի՝ Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար Նարինե Վարդանյանը, ուսումնական մասի պետ Երջանիկ Զարգարյանը, «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանը, ամբիոնի դասախոսներ Նարինե Մանուկյանն ու Արամ Սիմոնյանը Եվրոմիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 22-28-ը պաշտոնական այցով գործուղվել էին Իտալիայի Տուշայի համալսարան:

Այցի շրջանակներում Գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը ունեցավ տարատեսակ հանդիպումներ, մասնավորապես հանդիպեցին Տուշայի համալսարանի «Տնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի միջազգային համագործակցության պատասխանատու պրոֆեսոր Ջակոմո Բրանկայի հետ, որի շրջանակներում գիտակրթական միջազգային կենտրոնի «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի իրականացրած մագիստրոսական կրթական ծրագրերը, խոսվեց հետագա համագործակցության հեռանկարների մասին, մասնավորապես Համաձայնություն ձեռք բերվեց մշակել համատեղ կրթական ծրագիր՝ կրկնակի դիպլոմի շնորհմամբ:

Տուշայի համալսարան կատարած այցի շրջանակներում ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը հանդիպեց Տուշայի համալսարանի Դիդակտիկ քարտուղարության տնօրեն Կապուանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթական գործընթացում շահակիցների ներգրավման հնարավորությունները, կրթական ծրագրերի բարեփոխման որակի չափանիշները, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները, որակի ապահովման ներքուհական մեխանիզմներն ու գործիքները: Տուշայի համալսարանի որակի ապահովման պատասխանատուն հայկական պատվիրակությանը ներկայացրեց համալսարանի ֆակուլտետների ինքնավերլուծության ներկայացման ձևաչաձերը,

որոնց հիման վրա որակի ապահովման կենտրոնը կատարում է տարեկան ինստիտուցիոնալ ինքնագնահատում:

Տուշայի համալսարանի փորձը համարելով խիստ ուսանելի՝ ԳԿՄԿ որակի բաժնի ղեկավար Նարինե Վարդանյանի առաջարկով ԳԿՄԿ պատվիրակությանը տրամադրվեց Տուշայի համալսարանի որակի ապահովման ներքուհական համակարգի մեխանիզմները և ընթացակարգերը, որոնց հիման վրա կարվի որոշակի բենչմարքինգ, իսկ արդյունքները հետագայում կներկայացվեն և կքննարկվեն կենտրոնի որակի ապահովման ամբիոնային պատասխանատուներին հետ:

Վերադառնալով Հայաստան՝ ս/թ մայիսի 24-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ նիստերի դահլիճում կազմակերպվեց հանդիպում ԳԿՄԿ որակի ապահովման պատասխանատուների, վարչական ստորաբաժանումների ղեկավարների և «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի դասախոսական կազմի հետ, որտեղ գործուղված մասնակիցները նախապես պատրաստած տեսաշարով ներկայացրեցին և պատմեցին գործուղման մանրամասները և ձեռք բերված պայմանավորվածությունները: Ապա որակի ապահովման պատասխանատուներին Ն. Վարդանյանը ներկայացրեց Տուշայի համալսարանում գործող որակի ապահովման համակարգը, մասնավորապես ուսանողների շրջանում անցկացվող տարատեսակ հարցումների կարգը, որի վերաբերյալ ընթացան քննարկումներ՝ թե որքանով նպատակահարմար կլինի շահակիցների հարցումներն անցկացնել մինչ քննաշրջանը: Մասնակիցները փաստեցին, որ այս պահին դեռևս ԳԿՄԿ համակարգն ու ուսանողությունը պատրաստ չեն այդպիսի փոփոխության, սակայն այս հարցը կմնա դեռ օրակարգային: Ապա խոսք գնաց ամբիոնային հաշվետվությունները որակի ապահովման չափորոշիչներին համապատասխանեցնելու իտալական փորձի մասին, որոշվեց այդ փորձը քննարկել տարբեր ամբիոններում:

Նարինե Վարդանյան

ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ,

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

31.05.2018 թ.